Ա. Մութալիբով. «Շնորհակալություն Ղարաբաղի հարցում զորավիգ լինելու համար»

Թուրքական «Թերջուման» թերթը մայիսի 21-ի համարում հրատարակել է Բաքվից իր թղթակցի տեսակցությունը Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հետ, որտեղ ազգերի ղեկավարը «ժամավաճառություն» որակելուց հետո Հայաստանի խորհրդարանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ամեն մի հանդիպում, վկայակոչում է իր հանրապետության սահմանադրությունը եւ ավելացնում. *«Բոլոր նրանք, որ չեն հավանում այդ սահմանադրությունը, կարող են բնակության այլ վայր ընտրել. ոչ-ոքի չենք բռնադատում Ադրբեջանում ապրելու»:*

Այնուհետեւ, Հայաստանի ղեկավարությունը, որ ըստ իրեն «հույսը դրել է ահաբեկչության վրա», Մութալիբովի կողմից մեղադրվում «երկու ժողովուրդների միջեւ թշնամություն հրահրելու» հանցանքով: *«Եթե ուզում են հաշտություն,* ավելացնում է Մութալիբովը, *Հայաստանի Գերագույն խորհուրդը թող անվավեր հռչակի ԼՂԻՄ-ը հայկական տարածք համարելու որոշումը»:*

Վերջում, ղաղասխանելով այն հարցումին, թե Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի Բաքվում գտնված ժամանակ արծածվե՞լ է արդյոք Ղարաբաղի հարցը, Մութալիբովը ղաղասխանում է՝ «միայն անուղղակի կերպով», այնուհետեւ ավելացնում, թէ ինքը շնորհակալ է Թուրքիային եւ Իրանին, *«որոնք Ղարաբաղի հարցի ծագման առաջին իսկ օրվանից մեզ զորավիգ են կանգնել»:* ■